

լուսնան դեմքը ընտա թափելը չարք էթ չհիման է վէ համարել թիւերն աւել տարաք, սէնէտէ սիր գաչ տէֆաթար թիւը վէ մասքէլի պալոյորքի թիւը վէ միլլէթաէ, արթըքէթիլ վէ էմալի ֆաղիլէթէք պէթիլ Էթիլք կիւնահ տըր...

ԼԵՂՈՒՄՏԱՆ

Խմբագիր

Ամսոյ 8 ին կիւրակէ օրն քնդաքիս Գաւառական Ընդհ. Ժողովը ի Գիտ. դեմարեցան, առաջինն լինելով՝ նորընտիր Առաջնորդ Հօր նախագահութեան ներքեւ։ Նորին Սրբազանութիւն Ժողովը բացառ ազդու և գեղեցիկ գրաւոր ճառով մը, որոյ մէջ ճշգրիտ կերպով նկարագրեց նկարագրեց էր զկարնեցին, իւր ազդային դործերն և եկեղեցին այսպիսի ճանարտ հետազոտութեանց անդիւր, զորս 20 աւուր ընթացքի մէջ իւր խորին չղջահայեցողութեամբ կրցած էր ուսումնասիրել։ Ի՞նչ իսկ պատճառաւ իւր ճառին մէջ ճիւղանալու յայտարարութիւնը խորին ապաւորութիւն դործելուն թէ՛ Երեսփոխանաց և թէ՛ Ժողովրդեան ամեն դասակարգի ազդարնայ վրայ։ Այն օրէ ի վեր կարնայ մէջ օրուան խնդիր է նա, և ուրախ եմ յայտնելու թէ՛ կարնեցի Ժողովուրդը անհաճման համակրանք և սէր կը տածէ առ իւր նորընտիր Առաջնորդն, որ այնչափ համարձակ, այնչափ ազդու ապէս կը ներկայացնէր զինքը կարնայ վիճակին ներկայացնող Երեսփոխանաց և անաչառ կերպով մատնանիլ կրնէր պաշտօնական մարմնաց և Ժողովրդեան մէջ նկատած թերութիւններն։

Յաւարտ սոյն յուզիչ ճառին, որքան իւրեղով Ընդհ. Ժողովոյ Ատենապետ Տէր Երեսփոխան Յովհաննէս էֆէնտին, գրաւոր բանախօսութեամբ մը պատասխանեց Ս. Նախագահի քննարկն ճառին՝ միանդամայն Երեսփոխանութեան ներկայից Դիւանին միամետ ճամարատու թիւնն, զոր շնորհակալութեամբ ընդունիլ մոռցուեցաւ սակայն։

Օրակարգի խնդրոց անցնելէ առաջ՝ կարգացուեցաւ Վարչութեան չորս անդամոց՝ Մկրտիչ Պալլարեան, Մարտիրոս Գաֆաֆեան, Մամաս Դէօնեան և Գրիգոր Եանըգեան էֆէնտիններու հրաժարականներն զորս մեծաւ հաճութեամբ ըսեց Ժողովը, և ընդունեց Պահ մը խընդիր ծաղեցաւ մնացեալ երեք անդամաց վրայ ի նորոյ չորս անդամներ աւելցնելու, կամ մնացեալ երեք անդամներն (որք էին Յարութիւն ֆաստըրմաճեան, Յակոբ Տէգրանեան և Մկրտիչ Հայրապետեան էֆէնտիններն) հրաժարեցնելու առաջարկութեանց վրայ։ Այս տեղ Սրբազան Նախագահն մեծ ճարտարութիւն ունեցաւ վերջ տալու Ժողովոյ անդամաց խօսք կողմն ներուն, երբ նկատեց թէ՛ հետզհետէ կրկնապատում հաշիւներ մէջ պիտի գան, փութաց կոչումն ընել մընացեալ երեք անդամաց ազդատիրական զգացմանց... անմիջապէս թափեցան այս վերջինք և անստիճով Առաջնորդ Ս. Հօր վեհանձն հրաւերին և Աստուծոյ ձայնը լինելու չափ՝ բազմաց ձայնին, հրաժարեցան

ի մեծ դժուանակութիւն Երեսփոխանութեան, նա մանաւանդ ունեցողութիւն եկող Ժողովրդականութեան մը որ հակառակ Ատենապետ էֆէնտինի չափաւոր ազդարարութեանց կրկնեց ծախհարեց Նորին Գերազանդութեան բռնած հանձարեղ ընթացքին համար։

Տասն և չինգ չայրիկնի դադարէ մը յետոյ, Ժողովը ըստ օրինի Մայր Դիւանին նորոգ ընտրութեան ձեռնարկելով՝ խիստ կարեւոր և արժանաւորագոյն ընտրութիւն մը կատարեց քուէից մեծամասնութեամբ Ա. Ատենապետ ընտրելով զՍեծ. Կարապետ էֆէնտի Պալլարեան։

Բ. Ատենապետ՝ Յակոբ էֆ. Կարապետ։

Ա. Ատենապետ՝ Առաքել էֆ. Արտիսեան։

Բ. Ատենապետ՝ Պողոս էֆ. Թումանյան։

Այսուհետեւ նորակազմ Դիւանի կողմէ Ժողովոյ ներկայացեալ երկապատիկ փակեալ ցանկի մը վրայ ընտրութիւն կատարուելով՝ քուէից առաւելութեամբ նորընտիր Կարապետ էֆ. Տ. Աղաբեան Դանիէլ » Խաւաճեան փիլիպոս » Եկաւեան Յակոբ » Համաձեռն Յարութիւն » Փաստըրմաճեան Աղաճան » Երկանեան և Յակոբ » Յովսէփեան

որոնք ամենքն ալ գրեթէ Տէրութեան և ազգին օրինաց ծանօթ, լուրջ և իրենց պաշտօնին պատիւ բերող անձնաւորութիւններ են։ Կը մտղմեմ որ ներկայ Վարչութեան օրով լուծուին գոնեն այն ազգ. խնդիրներն, որոնք անընդ մնացին մինչև վերջը նախորդ Վարչութեան սեղանին վրայ։ Կը մտղմեմ որ համարախոսութիւն տիրէ պաշտօնական անձանց մէջ ի մեծ միեմտարութիւն մեր սիրեցեալ Առաջնորդին։

Ժողովը՝ փակուելէ առաջ, վիճակաւ դադարեալ Երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւն կատարուելու համար, որոնց հրահանգ տալ Վարչութեան։

Կիւնանամ թէ՛ հրաժարեալ վարչութիւնն ի մօտոյ իւր համարատուութիւնը պիտի բերէ Գաւառական Ընդ. Ժողովոյ։

ՇԱՀԱՊ

Կարնի, 14 Ապրիլ 1890։

Դե. Բաշաբաշ Կարնի Բաշաբաշ Կարնի

Տեսարք Երեսփոխանք Հայոց վիճակիւ կարնոյ

Այսօր առաջին անգամն լինելով իմ շորջս դեմարեալ կը տեսնեմ զՁեզ՝ որ կոչուած էք քուէի Ժողովրդեան խորհելու, խօսելու և զործելու զբարիս Եկեղեցւոյ և Ազգի։

Նախ քան զամենայն նուիրական պարտականութիւն կը համարեմ ամենախորին շնորհակալութիւնս յայտնելու այն անարգ ամեծար ընտրութեան համար՝ որով զնուաստութեամբ թիւումը ընտրեցիք և կոչեցիք յԱռաջնորդութիւն բաղմահայ քաղաքիս և ընդարձակածաւալ նահանգիս կարնոյ։

Պաշտօնիս մեծութիւնն, ծանրութիւնն ու փափկութիւնը առաջին անգամ զողովմն ու ստիպմն

պատճառեցին իմ կատարեալ ապակարութեանս, նա զի խղճի մասք կը վիայէի զանձնէս թէ «չեմ հանձարեղ ոմն՝ որ յանդգնիմ ստանալ զառաջնորդութիւն Ժողովրդեան»։ Այլ երբ կը մտածէի թէ պատուարժան երեսփոխանացը միաձայն բուէով կը կոչուէի յայս փափոքի պաշտօն, երբ կը մտածէի թէ և ոչ մի պատուարժան կարնեցոյ հետ չունէի բնաւ յարաբերութիւն ոչ աստ և ոչ ի վ. Պոլիս, երբ կը մտածէի թէ քան զիս առաւել արժանաւորագոյն հարց և եղբարց կը վայէր այս աթոռ, մինչդեռ «վիճակը երանէին ինձ ընդ ընտրութեան» հաստատուն հաւատով հաւատացի թէ՛ Աստուծոյ ձայնն է որ կը կոչէ զիս միաձայնութեամբ պատուարժան երեսփոխանացը, և քանի որ չգիտէի բնաւ մերժել որ և իցէ պաշտօն կամ ծառայութիւն առ որ կը կոչուէի և ոչ երբէք զանձն իմ կոչել տալու փորձ մտաբերէի, ուստի, անմիջապէս խնարհեցայ, հաւատալով հաստատապէս թէ Տէր Աստուած զօրութեանց որ կընտրէ և կը կոչէ ինձ նման տկար ոմն ի ծառայութիւն Եկեղեցւոյ, նա զիտէ զօրացնել զիւր տկար ծառայն և արխանել։

Այս հաւատքով և Եկեղեցւոյս ծառայելու պարտականութեան գիտակցութեամբ անմիջապէս թողուցի Կ. Պոլսոյ Պատրիարքական փոխանորդութեան պաշտօնս, զոր պատուաւոր կերպիւ կը վարէի և որով պատուեալ կը մեծարուէի թողուցի ամեն անձնաւորութիւն, թողուցի հոգեհարազատքս՝ որոց միակ միեմտարութիւնն էի, վերջապէս թողուցի ամեն ինչ, և փութացի եկալ սիրով ողջադուրեղ զձեզ՝ խորապէս զգածեալ էի քաղաքս մուտ ունեցած օրս սիրով ձերով, սիրով համայն Ժողովրդեանս, և այսօր իբրեւ հաւայն սիրեցեալ Ժողովրդեանս ներկայացուցչաց կը կրկնեմ Ձեզ իմ շնորհակալութիւնս և երախտագիտութիւնս և Ձեզմով համայն ազգային պաշտօնական մարմնաց և սիրելի Ժողովրդեան շնորհապարտութիւնս կը յայտնեմ վայելած համակրանք ընդունելութեան համար, որով այնքան փառաւոր ցոյց տուիք Ձեր Եկեղեցին յայտ ամենեցուն։ Մտղմեմ մը միայն։ Արդարեւ ամեն գործոց սկիզբն կը լինի փառաւոր, մաղթենք ի միասին, մաղթենք սրտագին, որ մեր գործոյն ինչպէս բուկիդն՝ նոյնպէս միջոցն և կատարածը լինին փառաւոր, որպէս զի ևս քան զեւս փառք փառաւորի Հայր մեր՝ որ յերկինս է։

Շնորհակալաց և բարեմաղթութեան այս գեղեցիկ պարտաւորութիւնն կատարելէս վերջ, Տեսարք Երեսփոխանք, անձնիք անկեղծ անստիճով ընկելու։

Ձեզմէ մեծապէս մասին, և թէ ոչ ամենուր հետ՝ չունեցայ միջոց առանձինն առանձինն ընդարձակ տեսութիւններ ընելու, առ ի ճանաչել զտրամադրութիւն իւրաքանչիւրոցը՝ որպէս և իւրաքանչիւր զմեզ լաւ ևս ճանաչելու համար, քան զոր ճանչցած համարէիք։

Սակայն անցողակի իմն տեսակցութեամբքս, զորս եկած օրէս ի վեր ունեցայ Ժողովրդեան ամեն դասակարգի հետ՝ կրցած եմ արդէն ունեցած համալմանս մէջ հաստատուել թէ՛ արդարեւ կարնոյ

մեր սիրելի Ժողովուրդն ընդհանրապէս բարի, ջեմեռանդ, եկեղեցաւոր, ուսումնասէր և աշխատասէր մի Ժողովուրդ է։

Իւր ջերմ փափաքն է միշտ ի բարեղարդութեան տեսնել զիւր Եկեղեցին, որ աշխարհիս վրայ ապաքէն միակ միեմտարութիւնն մնացած է Հայուն, իւր բաղձանքն է իրական յառաջադիմութեան մէջ տեսնել իւր վարժարանն, որ արդարեւ աշխարհիս վրայ միակ յոյսն է Հայուն, և իւր բարձր հոգածութիւնն է ունենալ օգր, միութիւն և խաղաղութիւն ընդ իրեանս, և իբրեւ հաւատարիմ հպատակ խաղաղիկ ապրիլ ընդ հովանեաւ Սոմ. պատուութեան՝ որ այսօր կը վայելէ Օգոստոսիայ Սուլթան Համիդի ընտանիքում։

Արջափ կրցայ չօշակիլ առնցմէ անգին չանցնել կարնոյ մեր սիրեցեալ Ժողովրդեան բաղձանքներն ու տրամադրութիւնները։ Կը հաւատամ թէ այսպիսի Ժողովրդեան մը ընտրած պատուարժան երեսփոխաններն ալ բնական է որ ոչ այլ ինչ լինին, բայց եթէ հաւատարիմ ներկայացուցիչք և թաւր մանք Ժողովրդեան բարի բարի բաղձանաց և զգացմանց և առաւել ևս զարգարեալ նոյն տրամադրութեամբքս։ Այսու համոզմամբ և խորհրդածութեամբ կը շնորհաւորեմ ուրեմն զձեզ, պատուարժան երեսփոխան տեսարք, և ամեն պարագայի մէջ կը հայցեմ ի վերայ ձեր զօրհնութիւնս և զնորհա Աստուածային, թող միեմտարական լինի և ձեզ համար մտածել թէ՛ ձեր նոր առաջնորդն ալ կը կրէ միեմտայն զգացումներն՝ զորս կրէ կարնեցին այս, իւր Եկեղեցւոյն բարեղարդութեան և վարժարանաց բարեկարգութեան խնդիրն գիւր ի վերայ է իւր համար քան զամենայն խնդրս։ ձեր առաջնորդն Եկեղեցի և վարժարան նկատած է երկու թեւերն Հայ ազգին, որոցմով կրնայ բարձրանալ նա. բնական է որ ոչ իւր օրաւոր լինին այդ թեւեր՝ այնչափ բարձր թռիչ կառնուն։

Դիմադրաբար պէտք է խորհովանիս ամենայն անկեղծութեամբ թէ Եկեղեցւոյ բարեկարգութիւնն ոչ այնչափ գոհացուցիչ վիճակի մէջ կը գտնուի։ Եկեղեցական պաշտօնեայք, անչափ բացառութեամբ հետէ պիտի աշխատեմք այս մասին։ Բայց ահա այժմէն կրօնք ամենայն անաչառութեամբ թէ այն եկեղեցական պաշտօնեայք, որք իւրեանց եկեղեցական պարտականութիւնը սրտի մտք և խղճմութեամբ կը կատարեն, պիտի յարգուի ու մեծարեմք։ Իսկ անոնք, որք կ'ընեն անհաւատ և այնփոյն կը զրուտուին իւրեանց պաշտօնն ու պարտականութիւնը ճշդիւ կատարելու մասին, որք Ժողովրդեան քրտանց արդիւնքով կարծին և անոնց զայն թափու թեան պատճառ կը լինին ո՛ր ու է ընթացքով, որք միտքաւոր «ղանձինս արածող հովիտներ են և ոչ զհօտ Բրիտանիա», այնպիսեաց հետ ո՛րք և լինին՝ պիտի վարուիմ այն բացարձակ հեղինակ

կուլտուր, զոր տուած է ինձ Եկեղեցւոյ զլուսն Յիսուս Բրիտանոս:

Այս այսպէս անաչառ կերպիւ կանխառ յայտնելով, կը փափագիմ որ մեր Եկեղեցական պաշտօնեայք զղուշութեամբ վարուին ամենուրէք, և Աստուած չընէ որ տարբեր ընթացք ունենան և ես ալ աւելոց հետ գործ ունենամ: Ստոյգ թէ՛ նոր Բաժանայից պէտք ունի բազմաձայն քաղաքս, և որոյ համար մի քանի ընծայացուներ ի տես հանուած են յեկեղեցւոյ՝ սակայն այդ ընծայացուաց ցանկն սրբագրելի, եթէ չըսեմ ջնջելի կերելի գէթ իմ աչքիս, որ իբրեւ տեսուչ և դէտ Եկեղեցւոյ կը նայիմ Եկեղեցւոյ, Եկեղեցականին և ընծայացուաց վրայ:

Մեր նախահարք Կարնոյ վիճակիս հոգևոր պէտքն շատ լաւ ըմբռնած լինելով՝ երեք վանք ընծայած են, որպէս զի այդ վանքերն ալ արժանաւոր Եկեղեցականներ ընծայեն Եկեղեցւոյ: Մեծ ցաւով տեղեկացած եմ թէ հակառակ յիշեալ վանօրէից նիւթապէս բարւոք վիճակին՝ անհրաժեշտ եղած հոգածութիւնն ի գործ դրուած չէ զանոնք իւրեանց վեհ նպատակին ծառայեցնելու համար: Պէտք չէ՞ր արդեօք որ մինչեւ ցարդ համատ ընծայարտն մը հիմնեալ լինէր այդ վանքերէ միոյն մէջ:

Այս խնդիր կենսական է ըստ ինձ և ամենէն առաջ պատուարածան երեսփոխանացդ լուրջ ուշադրութեան կը ներկայացնեմ խընդրելով մասնաւոր նկատողութեան արժանի համարել զայն:

Տեղութիւնս դարձնելով վարժարանաց վրայ առ այժմ չեմ կարող նպատաւոր կամ աննպատակ գաղաքար մը յայտնել, քանի որ միանգամ և եթ այցելելու միջոց ունեցայ, ինչ որ լինի՝ կը յուսամ թէ պատուարժան Ուսումնական Խորհուրդն ջանք չպիտի խնայէ ի բարեկարգութիւն վարժարանաց և ազնիւ Կարնիցիք ալ իրենց ուսումնասիրութեամբ, յանձնառու պիտի լինին ամեն զոհողութեանց՝ լաւ վիճակի մէջ տեսնելու համար իւրեանց վարժարաններն, որով իւրեանց ուրախութիւնը պիտի աւելնայ և մեր ալ միթարութիւնը:

Այս ամեն կարեւորագոյն խնդրոց, տեսութեանց և խորհրդածութեանց մէջ կու գայ կը ներկայանայ մեր առաջ տմենակարեւոր խնդիր մ'որ դժբաղդարար առ այժմ ուրիշ բանի վրայ խորհելու ժամանակ չը թողուր և ժամանակի մէջ մի վայրկեան կը կապուէ, կը կողոպտէ ի մէջ, պահանջելով որ ամեն բանէ առաջ, իւր վրայ դարձնենք և կեդրոնացնենք մեր համայն ուշադրութիւն, այն է խնդիր նորոգութեան կամարի Ս. Եկեղեցւոյ:

Այս տեղ զարմանքս չեմ կրնար զսպել այն զուգահեյլութեանց համար՝ որ ամեն անգամ նոր պաշտօնի կոչուելու՝ կը հանդիպին ինձ, նոր պաշտօնի գլուխ անձնելուս պէս՝ առաջին անգամ ողջունողս եղած է զիս նոր Եկեղեցւոյ կամ վարժարանի մը շինութեան խնդրելուն, այսպէս պատահած է ինձ ի Ռումանիա և ի Կ. Պոլիս, թէ և գոհութիւն Աստուծոյ որ ամեն անգամ ալ յաջողութեամբ պսակուած են, քանի որ ազգին մէջ պակաս

չեն բարեբարք, որոց Աստուած երկար կեանք չնորհէ:

Ձեր նախնիք իւրեանց սակաւթիւ վիճակի մէջ, նաեւ ըսեմ որ խոսր ժամանակաց մէջ ունեցեր են քաջութիւն և առաքելութիւն այս հոյակապ Եկեղեցին բարձրացնելու, որպէս և Արքեպիսկոպոսարանս, վարժարաններն ինչ. Դուք արդեօք պիտի ներքէք ձեզ որ ձեր առաջնորդն տագնապի այժմ մասնակի նորոգութեան մը խնդրով, հաւատալ չեմ ուզեր, միայն թէ պէտք չէ չափազանցութեամբ մտածել գործոյն վրայ, ինչ որ անհրաժեշտ հարկը կը պահանջէ ստիպողաբար, զայն պէտք է տնօրինել անպատճառ:

Մեք երջանիկ համարիմք զմեզ՝ երբ գիտնամք մեր նախնիքներէն յանձնեալ աւանդն լաւ պահպանել, ինչին անոնք թէ՛ բարոյական թէ՛ նիւթական, քան թէ աւելորդաց բաղձալով կորուսանեմք ձեռքերնիս ունեցածն ալ: Կարենցւոց հռչակեալ բարեպաշտութիւնն հաւատք և յոյս կը ներշնչէ մեզ թէ յաջողութեամբն Աստուծոյ շուտով կը ձեռնարկուի այս անհրաժեշտ նորոգութեան և ի գլուխ կեղծ ի փառս և ի պարծանս ներկայիս մէջ ապրող ու բարեբարոյ և Աստուծոյ տունը վտանգէ փրկող ժողովրդեան որք անշուշտ օրհնութեամբ և զօհութեամբ պիտի յիշատակուին ապագայի Հայ զաւակներէն:

Անցողակի իմն փափաք կը յայտնեմ նաեւ որ Արքեպիսկոպոսարանիս դիրքն ու վիճակն միշտ ի պատուի պահելու համար միջոցներ խորհիք և ջանք չխնայէք: Եթէ միանգամ ուշադրութիւն դարձնէք անցեալ տարիներու ելեւմտական վիճակացոյցի վրայ, պիտի տեսնէք թէ շատ իրաւունք ունիմ այս կէտիս վրայ ծանրանալու: Բայց առ այժմ չեմ ուզեր ասկէ աւելի խօսիլ: Այս մի քանի բառերն ալ արտասանեցի, քա՛ւ թէ չհասիրութեան, զի զիս ճանաչողք գիտեն լաւ թէ չեմ կրնար վայելցնել արժանաւորի կամ չահասիրի անարգ տրտղոսն, կը սիրեմ պաշտօնիս և վիճակիս շահն, օգուտն ու փառքը: Արքեպիսկոպոսարանն ձեր տունն է, և ազգին տունն է, ո՛րքան զայն փառաւոր պահէք, այնքան գուր կը փառաւորուիք յաջս ամենեցուն:

Ասոնցմէ զատ գեր ի վերոյ ազգային բարոյական կապերնիս ամբողջ պահպանելու մասին ալ հարկ եղած պարտականութիւնն ունիմք: Պարտք է քաջ գիտնալ թէ օտարք հազար ու մէկ հնարքով կը ճգնին սողոսկիլ մեր մէջ և որոգայթի մէջ ձգել, շատ արթուն գտնուելու եմք, խաբուելու չեմք, ամեն բանի մէջ ազգային արժանապատուութիւնն բարձր բռնելու եմք, ամեն գործոց մէջ խորհելու եմք, որ մի՛ գուցէ ուղղակի կամ անուղղակի մնաս հասնի ազգին պատուին:

Ուրեմն, Տե՛րք Երեսփոխանք, ունինք մեր առաջ Եկեղեցւոյ և վանօրէից բարեկարգութեան խնդրել, քահանայացուներ պատրաստելու խնդրել, վարժարանաց յառաջադիմութեան խնդրել, Եկեղեցւոյ կամարի նորոգութեան խնդրել: Եւ ինչ որոնք ամենուս հա-

մար կենսական պէտք է համարուին: Այս խնդիրք անհրաժեշտաբար կը պահանջեն իւրեանց լուծումն:

Ձեր Առաջնորդն բնաւ ամենեւին չերկնջիր ու է խնդիրներէ՝ ողբան ևս ծանր և դժուարին երեւին: Նա արդէն վաթսուած է դժուարութեանց յաղթելու, բայց կը վախայ միայն ի բանէ. — անմիաբանութենէ —, լաւ ուսումնա սիրած է նա, որպէս և գուր անշուշտ սա ճամարտութիւնն թէ՛ «Ջուգուլիւնն է ձայր բարեաց»: Մեր ազգն յանցելուն և միշտ այս ճամարտութեան փորձերն առած է:

Պէտք է միանգամ ընդ միշտ գիտնայք թէ ձեր Առաջնորդն երբէք կուսակցութեան մարդ չէ, չուզեմ հաւատալ թէ Կարնոյ մէջ կուսակցութիւնը գտուին, բայց ինչ որ ալ լինի, պէտք է խիստ քաջ համոզուած լինիլ թէ ո՛չ մի կուսակցութիւն յինքն կրնայ կորզել զԱռաջնորդն, նա հայր է հասարակաց, ամեն կուսակցութիւնը, ամեն աստիճանաւորը և հարուստ, աղքատ, մեծ, փոքր հաւատար են իրեն համար, ոչ մէկուն չվերաբերիր, բայց ամենուն կը վերաբերի, ամենուն հետ ալ կը խօսի, կը լսէ ամենուն ալ, կը սիրէ, կը խրատէ, կը յորդորէ, կը յանդիմանէ, կը սաստէ, կը մխիթարէ և այս ամեն ընթացքին մէջ ինք միայն մէկ կուսակցութեան կը ծառայէ, Եկեղեցւոյ և ազգի խաղաղութեան կուսակցութեանը և կը ցանկայ որ իրեն պէս իր զաւակներն ալ ծառայեն միմիայն այս կուսակցութեան, որ կըսուի Քրիստոսական կուսակցութիւն:

Ո՛հ, ձեր Առաջնորդը պիտի դողայ, երբ յիշէ թէ աստիճանն, հակառակութեան եւ անգոյգութեան վատ հոգին մուտ գտած է իւր ժողովականաց և ժողովրդեան մէջ, պիտի սոսկայ, այո՛, քաջ գիտնալով թէ ամեն բարձր խորհրդածութիւնք, ամեն վսեմ գաղափարներ և խոհեր ամեն բարի բաղձանք ու փափաքներ, ամեն ճիգ, ջանք ու աշխատանքներ շատ դիւրաւ կը փչրուին և կոչնչանան այս ահարկու թշնամոյն դէմ, սր մեր ազգի տունը տեղը քանդելու և տակաւին իսպառ ոչնչացնել կուզէ, մեր ուխտերիմ թշնամին է անմիաբանութիւնը, դարչնք և սոսկանք ի նրմանէ, Աստուծոյ սիրոյն համար, ազգին սիրոյն համար, գարշի՛նք, եղբայրներ:

Եւ արդ, Տե՛րք Երեսփոխանք, համառօտիւ պարզելով մեր սրտագին անկեծ զգացումները յատենի պատուական ժողովականաց սիրտի յոյզ կաղաչեմ զԱստուծո՛ր. որպէս զի օրհնելով օրհնէ իւրաքանչիւր անդամս Պատ. Ընդհ. ժողովոյ, Կրօնական և Բաղադական ժողովոց, Թաղական, Ուսումնական և Վանական խորհրդոց, դրացւորական պաշտօնէութեանց, օրհնելով օրհնէ զհամայն սիրելի ժողովուրդս մեր ի ծերոց մինչեւ ցնորածինս և յամենեցունց հեռի արասցէ չար ողին նախանձու, ատելութեան, հակառակասիրութեան և անմիաբանութեան, և Ս. Հոգին Աստուծո՛ր իջցէ և հանգիցէ ի վերայ համայնիցդ, պահելով պահպանեցէ զամենեւեանգ ամբաժաժուի ի մէջ սուրբ և յաւիտե-

նական ճիշդ միութեան և խաղաղութեան, առաջնորդելով միշտ ի բարին և ի ճամարիտն, կարողացուցէ զձեզ ի պաշտպան ձերում, յաջողութեամբ պսակեցէ զամենայն ձեռնարկս ձեր որ ի փառս Սրբոյ Եկեղեցւոյն Աստուծոյ և յօգուտ ազգիս:

Այս անկեղծ զգացմամբ սրտագին մաղթանք և օրհնութեամբ կը բանամ ժողովս, Տե՛րք Երեսփոխանք, միշտ մաղթելով ի խորոց սիրտի նորանոր օգիտ, սէր, ջանք և ճիգ ձեզ համար, յաջողութիւն և արդիւնաւորութիւն ձեր գործոց համար, խնդրելով որ դուք ամենեւեդ աղօթող լինիք վասն իմ:

ԻԼՍԱՍԻ ԿԵԼԻՆՃԻՔ ԻԼԼԵԹԻ

Միլլէթիմիզտէն քեամիլ գաթըն պիրի, շիֆտիե տէկիլի, քէնտուեէ, կէլիեհէ իլլէթիննէ միթէտափիսի նիլիեթիլի միւրաճաթ իթմիլ պուլուանս պիր չօգ քիմէսնէլէրէ մէճանէն, եանի խայրաթ օլարագ պագմըլ, վէլազմէլէն մուալիճէսինի հիմէթ իթմիլ վէ միւրաճաթ իտէն գաթլարտան տաեիմս պիալի իլիտա քեամիլէն շիֆաեալ օլարագ, չօգ տուալար ալմըլ վէ թէշէքիւրլէր իլլէթիլ իսէտէ, պու եօլտա խասթէկեան իլին պազը կիւճիլլէր պուլուանսը ճիհէթիլ, մէքիւր մէնֆաթտան մահրուլ գալտըլտըր կէօրիլմիւլ օլուպ, վէ պագը պիւեիլը զաթլար թարաֆընտանտա, պիր մահէլլի մախուս թախսիլիլէ, հէքէսէ գօլայլը վիւրլմիսի, վէ անճագ ֆագըր վէ պիլաեէկեանէ մէճանէն պազմըլ, սաեիլլէրտէն իւճըլթ վէ մէսարիֆի լազմէլ ալլըմասը թէլիլ վէ նասիհաթ իտիլտիլիլէն, վէ միւմալիլլէր գաթ, պու տէֆա Գալաթտա, Բէնշէշէպիլ-բագարընտա վագը Ձիւնիլիլ խանըն իւսթ գաթընտա 11 նիւմըր իլլէ միւրագգամ օտաեը, մահէլլի մախուս իթթիլալ իլլէթիլ միւլալլէլ օլտուղունտան, իլլէթի մէքպուրէե միւլալլէլ օլտալարըն մալիւմարը օլմագ իւզըրէ իլան ու իլթար իտէրիլ:

Տափա վէքիլլէրինտէն Մուսճեան Յովհաննէս վէ Կեսարեան Ղազարոս Եֆէնտիլէր, պու տէֆա քէնտի եաղլիսանէլէրին պիրլէշտիրիլ, Տէրսաատէթտէ, Բարմագ դարուտա, Օգուլար պաչընտա, Չաթալ-խանընտա 11 նիւմըր օլտաեը իտալիլիսանէ թախսիլիլէ, իւհտէլէրինէ թէվտի գըլընան քեաֆֆէյի մէվատտէ, եէքտիլէրինէ միւլթէքէֆիլէն մէսուլ օլմագ իւզըրէ ագտը շիքէթ իլլէթիլ օլտուգարընը, վէ պուլտան պէօլլէ մէքիւր իտարէլիսանէտէ, հէր Նէվ տափա վէքեալէթի, վէ պիլիլմիլէլէ վարագը տապիլ թանգիլմի, վէ բուլեթիլ մուհասէպէ զըմընտա միւլմէյիլիլը վէ սաեիլլէ տէրիւհտէ վէ գապուլ իտիլլէճէկի կիպիլ, թարաֆէյի մուխասէմէյի ճանիպիլտէն միւրաճաթ վուլուլիլտէ, մէնֆաթթ միւլթէրէլէլիլ կէօզէտիլլէրէ, թէլիլիլ պէյի իլլէ սուլլ վէ իպրալ գաղիլլէսինէ սարֆը մէսաեիլ իտիլլէճէկիլտէն, վէլասըլ իւհտէլէրինէ մուհապիլլէ մէվատտը ումուլիլլէ վէ իուսուսաթ սաեիլլէ հիւսնի սուրէթտէ պիլ իլլա, ասհապը մէսալիլիլ մէմուս գալաճաղը վարէս թէյի իլլէթիլալ տըր: